Հաստատում եմ՝ 15 հոկտեմբերի 2025 թ.

Ռուս-Հայկական համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

21-րդ դարում մարդիկ ավելի ու ավելի շատ են ձգտում կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն է ընձեռում կազմակերպել փոխներգործուն դասեր, կիրառել տեսալսողական ժամանակակից միջոցներ: Մուլտիմեդիա տեխնոլոգիան դարձել է օտար լեզուներ սովորելու հիմնական գործիքը: Նրա առաջնային գործառույթն է ապահովել շփում տարբեր մասնագիտություն, ազգային պատկանելություն ունեցող մարդկանց միջև: Այս թեմայի ընտրությունը չափազանց ողջունելի է, այն ոչ միայն ժամանակակից է և ակտուալ, այլև նպաստում է կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ համադրելով տեղեկատվական տեխնոլոգիաներն ու օտար լեզվի գործնական ուսուցումը: Մուլտիմեդիայի ինտեգրումը ուսուցման մեջ խթանում է ուսանողների ակտիվ մասնակցությունը, ստեղծում է հարուստ և դինամիկ

կրթական միջավայր և ամրապնդում է լեզվական հմտությունները իրական գործարար միջավայրի համատեքստում:

Ատենախոսության նորույթներից մեկն այն է, որ հեղինակի կողմից վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա հիմնավորվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները գործարարական անգլերենի դասընթացում :

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, հիմնահարցի մշակվածության աստիճանը, ներկայացրել աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, սահմանել է պաշտպանության ներկայացվող դրույթները, նկարագրել հետազոտությանիրականացման փուլերը, ներկայացրել է աշխատանքի ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, ներդրման տեսությունը և պրակտիկան» խորագիրը կրող գլխում ատենախոսը ներկայացնում է կրթության ոլորտում թվային հաղորդակցության ու համացանցի օգտագործման, էլեկտրոնային ուսուցման, նորագույն տեխնոլոգիաների միջոցով գիտելիքի փոխանցման փուլերը:

Տեսանյութերի ընտրության չափանիշները գործարարական անգլերենի դասընթացում վերլուծելիս, ատենախոսը դիտարկում է տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները: Առանձնացնում և բնութագում է գործարարական ուղղվածության տեսահոլովակների և տեսանյութերի տեսակները:

Ուսումնասիրելով մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման սկզբունքները գործարարական անգլերենի դասընթացում, ատենախոսը դիտարկում է տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները: Տեսանյութերի ընտրության չափանիշներից առանձնացվում են ինտենսիվության, անհատականացման, բնագրայնության, տարածաշրջանային աշխարհագրական տեղեկատվության առկայության, միջանձնային հաղորդակցության տարբեր իրավիճակների, թեմայի համապատասխանության, բարոյական և էթիկական ներուժի առկայության,

գեղարվեստական ձևավորման որակի, ժանրային բազմազանության, ընդհանուր կամ նեղ մասնագիտական կենտրոնացման հարցադրումները:

Ատենախոսության երկրորդ գլուխում՝ «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում», ատենախոսը քննության է առնում թվային պատմվածքը և TED դասախոսությունները՝ որպես մուլտիմեդիա տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչներ: Այնուհետև ատենախոսը դիտարկում և հիմնավորում է մուլտիմեդիա նախագծի կիրառման անհրաժեշտությունը գործարարական անգլերենի դասընթացում: Սահմանում է մուլտիմեդիա նախագիծը, ինչպես նաև տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, խաղային նախագծերի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում: Ատենախոսը մանրամասն ներկայացնում է գործարարական անգլերենի ուսուցման մշակված մոդելի բովանդակությունը: Բնութագրում է նրա կառուցվածքային բաղադրիչները՝ ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիա վարժությունները, մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները, մուլտիմեդիա հնարները, մուլտիմեդիա միջոցները:

Դրվատելի է ատենախոսի կողմից թեմայի ընտրությունը, այն վկայում է ատենախոսի արդիական մտածելակերպի, նորարարական մոտեցումների և կրթության որակի բարձրացման հանդեպ ունեցած խոր հետաքրքրվածության մասին: Թեման ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորություն, ինչը նաև լայն հնարավորություն է տալիս հետազոտական աշխատանքն առավել կիրառելի ու արժեքավոր դարձնելու համար:

Ուշադրության են արժանի աշխատանքում զետեղված աղյուսակներն ու գծապատկերները, որոնք օժանդակում են նյութի ընկալմանը: Ակնհայտ է, որ ատենախոսը քաջատեղյակ է ուսումնասիրվող նյութին:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով: Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն փոխկապակցված են: Հոդվածները և սեղմագիրը արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Արդյո՞ք հնարավոր է հավասարապես զարգացնել բոլոր հմտությունները մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման ընթացքում: Որ հմտություններն են առավել զարգանում և որոնք առավել պակաս:
2. Ինչպիսի՞ հատկություններ պետք է ունենա տեսանյութը, որպեսզի այն կիրառվի գործարարական անգլերենի դասընթացում:
3. Որքանո՞վ եք վստահ, որ ուսանողի վերջնական արդյունքի հեղինակը հենց ուսանողն է, այլ ոչ թե արհեստական բանականությունը:
4. Որքանո՞վ է համապատասխանում մուլտիմեդիա ուսուցման միջավայրում ուսանողի առաջընթացը միջազգային գնահատման սանդղակին:
5. Արդյո՞ք բոլոր ուսումնական հաստատությունները համալրված են անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումն ապահովելու համար:
6. Անհրաժեշտ ենք համարում պարտադիր պլանավորվել ուսուցիչների համար դասընթացներ կամ սեմինարներ՝ լեզուների ուսուցման ժամանակ բազմամեդիա միջոցների արդյունավետ կիրառման թեմայով:
7. Ատենախոսության մեջ կան որոշակի լեզվական անճշտություններ և տեխնիկական վրիպակներ, որոնք ցանկալի է շտկել և վերանայել:

Նշված նկատառումները հայեցակարգային չեն և չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունն:

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Քրիստինե Աշոտի Սարգսյանի «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման գործընթացում» ատենախոսությունը ամբողջական, գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ԺԳ. 00. 02 թվանիշով) գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, և նրա հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Ռուս- Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2025 թվականի հոկտեմբերի 15-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 3):

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Սայամյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս - Հայկական
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 15 հոկտեմբերի 2025թ.
Հայ - Ռուսական (Սլավոնական)
համալսարանի գիտական քարտուղար, բ.գ.թ. Ռ.Ս. Կասաբաբովա